



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5706

07

U-74

1260

2010

29

q +

BB 2001

ՏՔՆՈՒԹԻՒՆՔ

ԵՒ

ՍՓՈՓԱՆՔ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

ՓԱՐԻԶ. — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

PARIS. — Typographie aménienne. WALDER, rue Bonaparte 44.

Եկզ. Յիսակիանի Կ. Մկրտչեան

Ա.

ՏՔՆՈՒԹԻՒՆՔ
ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Ժ.

ՄԷՃՄՈՒԱ

ԿՐՕՆՔ, ՓԱՐԻԶԱԿ, ՄԻԿԱՏԻ. ՓԱՐԻԶ, ՄԵՂՈՒ
ԵՒ

ՀԱՅՈՑ ԱԶԳ

Բ.

ՍՓՈՓԱՆՔ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Ա.

ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

ՓԱՐԻԶ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1860

Handwritten text at the top of the page, possibly a title or header, in a cursive script.

91030-64

1289

9

40

ԱԶԴ

Այս յօդուածիս երկայնութիւնը մեզի չէր ներեր ոչ օրագրի մէջ գրել, և ոչ ընդհատել, մեր այս յօդուածով Մէճմուան Մէճմուայի ամբողջ ցըցունելու մտօք միապաղաղ հայելի մը յօրինած ըլլալով, հայելին ալ ամբողջ պահելու համար զատ տետրակ ըրինք : Կը յուսանք թէ Մէճմուան գոնէ աս անգամ ինքզինքն աղէկ ճանչնալով ինքզինքէն կամչնայ, և Տաճկերէն պարսիս բառն ասկէ ետե ուրիշին չիշռայլէր, կամ Թերևս բոլորովին կըլուէ, և աղէկ կընէ : Վասն զի, Հայոց կանանց պատիւը, Հայոց ազգը, եկեղեցին և օրագիրները ինք Թշնամանելու սկսելուն, պէտք է, որ կամ ըսածները փաստով և իմաստութեամբ հաստատէ, և կամ խենթ ու խելառ խօսած ատենն ալ լսածներուն դիմանայ :

Մենք արդէն, իրեն հետ մինչև հիմայ կարեկցութեամբ խօսելնուս վրայ ոմանց կամաւոր գայթակղութիւններն արհամարհելով, իրեն ըսելիքներնուս մնացորդը զանց ընել կը յօժարէինք, բայց ինք, իր ՅՅԱ Թուովը ճիտերնիս սխմեց որ խօսինք : Թէ որ մեզ խոսեցունելն իրեն հաճոյ կըթուի նէ, մենք պատրաստ ենք միշտ խօսելու. վասն զի, մեզի մատուցած նիւթը, մտածութեան անսպառելի աղբիւր մըն է : Նիւթոյն արգասաւորութեանը հետ կռիւն ալ սկզբանց և ոչթէ գռեհիկ ընկերշակութեան կռիւ ըլլալուն, կը խօստանանք, որ ինչէս մինչև հիմայ, նոյնպէս ասկէ ետե ալ, իր դէմը գործածելիքնիս, փաստ, ապացոյց, տրամախոհութիւն, ուղղադատութիւն և ողջմտութիւն պիտի ըլլայ :

Սկզբանց և ազգային էական իրաց վրայ վիճած ատեննիս, ա-

մենևին, մեր գրչին ծայրը ցողած ազգային դպրութեան փոքրիկ բաժիններնիս զինւոյ և ցքիյի չենք փոխեր, և մեր ոսոխին ինչ և իցէ պատասխան մը տալու, և ընթերցողներնիս զբօսցունելու համար Խառա-կեօզի և Հանի էյվարի վայելուչ լպիրշ խօսքեր չենք ըներ : Ազգն իր տազնապագին վիճակին մէջ ապաշխարող եկեղեցի մը և ոչ թէ կատակագուսանութեան Թատըր ըլլալուն, իր դիտաւորութեանց և կարեաց սրբութիւնը մեզի չըներեր, որ զինքն ու իրենները միայն մտմըտացող պորտաբոյծի պէս լռենք կամ շնթենք, և կամ հռոմէական հին Թատրէն ելած դերասանի մը պէս, ընդասուն ականջաց ցնցուղները պատռելու զազրախօսութիւն ընենք : Գրիչնուս զուարթութիւնը չթօշնեցունելով, ինչ որ մեր քերց ու մարց առջին խօսելու կը պատկառինք, հասարակաց քերց ու մարց և ամուսնաց ամօթխածութենէն ալ ականածելով, անիկայ հրապարակաւ և անքող և անծածկոյթ գրելու լրբութենէն կըխորշէինք :

Մեր ազգն իրեն բնականից ազգաց ամմենեն համեստն ըլլալով, մենք չենք համարձակիր իր առջին Սուրու-խուրեցի Զինկեաններու հետ խօսելու պէս երեսնիս պատռել : Եւ մենք ալ իրարիւնէն ու ոսկորներէն ըլլալնուս, իր անուամբն ինքնզինքնիս ալ պատռելով կը պարծինք, որ Զինկեանի գրիչ չենք : Ինչ որ իրաց կամ անձանց բնիկ կամ եկամուտ հանգամանքը չէ, անիկայ մեզի զէնք ընելու վատութիւնը չենք ըներ, և օրինակ իմն, կրօնամուլը գող, ու մատնիչը պռունիկ չենք յորջորջեր : Մեծմուշա կրնայ այս ըրած խոստմունքներնուս վստահ ըլլալ, և ինչպէս որ ըսինք, ուզէ նէ, ասկէ ետեւ ալ մեզ խօսելու ստիպել : Քանի մը խօսք ալ Մեծմուշայի պատճառաւ մեզի քար նետողներուն :



ՍՓՈԹԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Ս.

Փոխադարձութիւն.

Մի յաղթիր ի չարէն, այլ յաղթեալ քա-
րեաւն չարին: Հոռմ. ԺԲ, 21.

Ոմանք, Մեհմուլայի գրչին ձրիցը վրայօք եր-
բեմն մեծարնօք խօսելնիս տեանալով, իրենց պի-
տանի թուեր է համարել և հրապարակել, որ մենք,
Մէհմուլան մեր ազգէն աւելի կը սիրենք, և մեր ազ-
գային օրագրաց պատուէն աւելի Մեհմուլայի պա-
տոյն նախանձայոյզ ենք եղեր: Ասանկ զուար-
ճալի ամբաստանութիւնները՝ թէ որ ընողներուն
շահաւոր կըլլան, և իրենց թերթին քանի մը յա-
ճախորդ աւելի կը ընան բերել նէ, մեզի անվնաս
զրկանօք իրենց հացին եղ քսելնուս ուրախ կըլ-
լանք: Աս ըսելնուս ետև ինքնին կը հասկըցուի,
որ իրենց ամբաստանութեանցը դէմ ինքզինքնիս
արդարացունելու հոգն ալ Մեհմուլայի անուանի
զրաշարներուն կը յանձնենք: (Տես երես 30)

Բայց որովհետև այս դատախազութիւնն ընող-
ները հաճեր են մեզ իրենց նախնի պատուական վար-
ժապետը յորջորջելու մեծարանքն ընել մեզի, մենք
ալ իրենց շնորհապարտութեան զգալի վկայու-
թեանը վրայ բերկրելով, Պերիկղեսի օրինակին
կը հետեւինք, և երեսնիս թու քնելով մինչև դուռ-
ներնիս եկողները, մթան մէջ մեր ազօա զամպու-

բովն իրենց վերագործի ատենը լուսաւորելու համար, մեզի ուղերձած ամբաստանութեան հատուածնուն բառից, խմաստից, ու տրամախոհութեան սխալներն իրենց կընշանակենք, որ անգամ մըն ալ մեզի դէմ գրելու ըլլան նէ, գրածնին աւելի բանաւոր, ճահաւոր, արժանաւոր և արդիւնաւոր ըլլայ : Առջեւն նէ, մեզի դէմ գրելիքներնին ալ տպելէն առաջ մեզի խրկեն, որ առաջուց և մարդ չիմացած, աչքէ անցունենք իրենց օգտին համար : Ահաւասիկ հիմակուանը :

« Մեհմուտ . . . քու զլուխդ չախջախեցին Մա-
« սիս, Միւնասի, Մեղու, ու Փարիզ. անանկ որ
« հինուց մնացած բարեկամ մը Փարիզէն տեսաւ
« ու խղճաց վրադ, և հազար մղոն հեռուէն ձեռք
« կարկառեց, որ ցեխին մէջէն քեզ ազատէ » :
Այս տողերուն մէջ հարկաւոր յատուկ անուն մը պակսելով հակաբնական խմաստ մը կայ. (քոնթռասան) : Այս անունը մերն է : Մասիսի և Փարիզի մէջ Մեհմուտայի դէմ իրենց հեղինակներէն աւելի մենք գրած, և Մեղու ալ յօդուածներնուս մէկ քանին յօժարութեամբ կամ ստորջանօք օրինակած ըլլալով, անուննիս այս իրեք օրագրաց բովն անյիշատակ թողաւելուն պատճառաւ, օրագիրներն առանձին հանդիսադիր, և մենք լոկ հանդիսատես մնացեր ենք :

Այս խմաստը գրողները, յղացած ամբաստանութիւննին մեզի աղէկ պատշաճեցունելու համար,

առաջ անուննիս լռեր, և տեղն այն հակաբնական
խմաստն ընդուներ են : Անուննիս դրուած ատենն
ալ, որ դնեն չիղնեն բնականաբար հոն է, իրենց
համար հակասութիւն կայ. այս ինքն, մէկ կող-
մէն այս օրագիրներուն հետ Մեմֆուայի գլուխը
ջախջախած, մէկ կողմէն ալ Մեմֆուայի ձեռք
կարկառած կըլլանք : Այս հակասութիւններուն
հետգլուխջախջախելու ահաւոր փառքն ալ իրենց
կըրթողունք, և Մեմֆուայի կարեկցութիւն ընել-
նուս յայտնի վկայութեանը համար իրենց շնոր-
հակալ ենք. վասն զի գլուխ ջախջախելու դիւցազ-
նութենէն մեր անուան լռութեամբը զրկուեր ենք
նէ, զոնէ Սամարայւոյն խոնարհ գովութեանը մաս-
նակից ենք եղեր :

« Բարէ, մենք ալ, առանց քու բարեկամդ ըլլա-
« լու, քու ազատամիտ համբաւիդ և քու գրական
« արժէքիդ սիրուն համար մենք ալ ձայնակից կըլ-
« լայինք Միսաֆեանին, ու իրեն պէս չափազանց
« երկու գովեստով դժբախտութիւնը շողոքորոթե-
« լու վեհանձնութեան օրինակմ ալ մենք կընծայ-
« էինք թերեւս, . . . » Ահաւասիկ այս ատղերուն
մէջ ալ մէկ հակասութիւն, երկուք ալ անբնական
խմաստ կայ (նոն-սան) :

Ա. Մեզի ըրած գլխաւոր սողիւտնին, Մեմֆու-
այի չափազանց երկու գովեստ տալերնիս է : Քու
ազատամիտ համբաւիդ եւ քու գրական արժեքիդ
սիրուն համար Միսաֆեանին ձայնակից կըլլայինք

բաւերով չափազանց կամ չափաւոր, մեր ըրածին հաճեալ երկու գովեստ ալ իրենք ըրած ըլլալով, և ան ալ սիրոյ համակրական բռնովը հանդերձ, մեզի ըրած ամբաստանութեաննին հակասութիւնով մը բաւեր են :

Բ. Դժբաղդութիւնը շողոքորթելու վեհանձնութիւն :

1^o. Վեհանձնութիւնն առաքինութեան դասակարգութենէն է. և շողոքորթութիւնը ոմանց բով փոքրոգութիւն այլոց բով ալ վատութիւն ըլլալով, փոքրոգութիւնն ու վատութիւնը ոչ առաքինութեան կը զուգին, և ոչ տրեք և ոչ երբէք վեհանձնութիւն կըրնան անուանիլ :

2^o Շողոքորթութիւնը երկիւղի կամ ակնկալութեան համար կը ըլլայ : Երկիւղը բռնութենէ կամ զօրութենէ կազդի, և ակնկալութիւնը, չունենորէն տնեւորին տնեցածներուն վրայ կը ըլլալ : Դժբաղդութիւնն ալ յաջողութեանց բացակայութիւնը, նպակասիւր, դադարիւր, կամ կորուստն ըլլալով, դժբաղդին ինչէն կը վախցուի, և ինչ ակնկալութիւն կը ըլլայ : Դժբաղդն իր տնեցածները կորուսած ըլլալով, թէ որ կարեկցութեան արժանի է նէ, ան ատենը դժբաղդութիւնը շողոքորթել չըսուիր, փաղարշել և զգուէլ անգամ չըսուիր, այլ, դժբաղդութիւնն արգոհատել, ասիտիել, մխիթարել, յուսադրել, քաջալերել և այլն կըսուի, և անատենը վեհանձնութիւն բռն ալ իր նշանակութիւնը վայել-

չապէս կը պահէ : Հիմայնային ք թէ մեր անուանեալ
աշակերտն ինչո՞ւ այս վեհանձնութիւնը Մեհմուայի
ընել չէ ուզեր մեզի պէս :

« Թերեւս : . . վեհանձնութեան օրինակմ ալ
« մենք կուտայինք, կըսէ, եթէ քու համբաւէդ ու
« քու գրչէդ աւելի մեր ազգը չըսիրէինք, այլազ-
« զիյի մը և այլազգի օրագրի մը պատիւէն աւելի
« մեր Հայ ազգին և Հայ օրագրաց պատուոյն նա-
« խանձայոյզ չըլլայինք » : Ըսել է թէ, մենք վե-
հանձնութիւն ընելով, ազգն ու օրագիրները Մեհ-
մուայի փոխանակեր ենք : Արդեօք Մեհմուա եւ
Հայ օրագիրները մակազրեալ յօղուածներնիս՝ Մա-
սիսի Փարիզակի և երբեմն Մեղուի մէջ ալ, հեռուն
ուրիշի ստորագրութեամբ կը պըտըտին. և մեզի
խրկուած օրինակները միայն մեր անուամբը տալ-
ուած են : Բայց մենք կը հաւատանք, որ անոնք մեր
զրածներն են, և պէտք եղած ատենը մեզի բաւա-
կան ջատագովութիւն կընեն : Ուստի մենք ալ այս
անտեղի և անվնաս քաշկռտութիւնները մեր աշա-
կերտին կողմէն իբրև կազանդչէք կընդունինք
ժպտելով :

Եւ սակայն հասարակաց օգտին համար հասա-
րակաբար խօսելով, թէ որ վեհանձնութիւնն ա-
ռաքինութիւն է նէ, ինչո՞ւ համար Հայ գրչէ մը
Մեհմուայի եղած վեհանձնութիւնն ազգատեցու-
թիւն պիտի համարի : Մեր աշակերտը Մեհմուայի
գժբազդութիւնը խոստովանելէն ետև վեհանձնու-

Թիւնը որի ընելու էր : Հայ օրագիրներուն : Բայց
Հայ օրագիրներն իրենց կամ այլոց գրուածնե-
րովը յազմական և ոչ դժբաղդ էին : Թէ որ հայ
օրագրաց տեղ օտար օրագրին նախատէինք նէ,
ամմէն Հայ իրաւամբ կը ըրնային մեզի ըսելով, « Ոչ
է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել
շանց ⁽¹⁾ » : Ընդ հակառակն, մենք ձեռունուս եկա-
ծին չափ Հայ օրագրաց նախատելով, ոսոխին
կատարեալ պարտութիւնն ու ասպարէզէն հրա-
ժարիլը տեսնալնուս ետեւ, իր դժբաղդութիւնն
արգահատելու վեհանձնութիւն, ըստ մեզ, մարդո-
սիրութիւն ըրեր ենք : Ընելու չէր :

Ի՞նչ է ուրեմն վեհանձնութիւնն ըստ բա-
րոյական իմաստասիրութեան « Ուրիշները
մտմտալու համար ինքզինքը մոռ-նալ, ներել
Թշնամանաց, և պարտեալ Թշնամին իբրեւ եղ-
բայր խնամել » : Մեր չարախօսն այս յաւի-
տենական պարտաւորութիւններն է, որ պար-
տեալ ոսոխին խնայելէն ետեւ կը պարծի, և հա-
տուցանողին ալ քարկոծութիւն կը ընէ : « Քաջա-
լերեաց, որդեակ, զի երանգ առաքինութեան
փայլի յերեսս քո » :

« Անոր համար ահա մեր նախնի պատուական
« վարժապետին ու արդի բարեկամին բիւզան-
« դացի գրչաց համար գրչին ծայրէն փախուցած

(1) Մարկ. է. 27 :

« իրեն անսալու խոնարհամտութիւն ու պարսա-
« կան լռութիւն բառերը մեր աւանդին հնչեցին՝
« իբրեւ զծնծղայս որ զօղանջեն » : Հիմայ հաս-
կըցուեցաւ՝ վերէն ի վար այնչափ անտեղու-
թիւն ծամծմուելուն բուն պատճառն ու նպատակը :
Բիւզանդացի զրչաց ամմեննուն ալ ըրած է զբայ-
րական առաջարկութիւնն իս մէջ խոնարհամտ
աշակերտին խմտատուեան ու պատւոյն դաշելով,
մեզ իր պատուական վարժապետ յորջորջած տեղը
յայտնել ուզեր է, որ իրեն անանկ պարզ, ան-
մնաս և մարդասիրական առաջարկութիւն ընելու
մարդ չէինք. անոր համար խօսքերն իս ալ ծնծ-
ղայի պէս զօղանջեր է իր աւանդին :

Քննէ. Պօղոս առաքեալինն է այս ծնծղային
խօսքը. « Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և ըզ-
« հրեշտակաց և սեր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ
« զպղինձ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս որ
զօղանջեն ⁽¹⁾ : » և ինչպէս կը տեսնուի, սիրոյ
պակասութեան վրայ է առաւարտութիւնը : Մենք
ալ բիւզանդացի զրչաց այն կամայական առա-
ջարկութիւնն ըրած ատենն իս, ոչ թէ զօրութեան
կամ մեծութեան, այլ, կարծեալ սիրոյն վատա-
հած էինք : Եւ որովհետեւ խօսածն իս մեզ իր պա-
տուական վարժապետն անուանողին աւանդացը
ծնծղայի պէս հնչեր է, հարկաւ, վեհանձնութիւնն

(1) Ա. Կորնթ. ԺԴ, 11:

անկեալ Թշնամոյն զլացողին քով մեր կարծած
սէրը չկայ եղեր, և ան ատենը Միգասի ահանջն
ի վար սրինգ ալ հնչենք նէ, ծնծղայի պէս կը-
զօղանջէ, և պատուական վարժապէս բառերուն
հետ ծնծղայի զօղանջիւնն ալ պատուասիրական
և վերջին հակասութիւն մը կըլլայ, որուն վրայ
ամչնալու պէտք ու պատճառ մը չունինք մենք:

Արդ, Թէպէտ և մեր աշակերտին անտեղի ամ-
բաստանութեանցը դէմ ինքզինքնիս արդարացը-
նելու փոքրոգութիւնն երբէք չենք ըներ, բայց
այլոց դէմ ըրած պակասութիւննիս ճանչցածնուն
պէս խոստովանելու միշտ պատրաստ ըլլալով:

Ա. կըխոստովանինք, որ չճանչցած մարդերնուն
ընտելական մտերմական և ազգասիրական առա-
ջարկութիւն մը ընելնիս մեզի ծայրագոյն յիմա-
րութիւն մըն էր: Ուստի, Թէ որ առաջարկութիւն-
նիս միւս օրադրաց ալ ծանր Թուեր է նէ, մենք
այժմէն ինքնին Թողութիւն կը խնդրենք, որ մէյ-
մէկ դատաստան ալ անոնք չիրանան վրանիս:

Բ. Մեր աշակերտին սրտնութիւնն ալ իջե-
ցունելու և Թշնամանեալ պատիւը տեղը տանե-
լու համար, մեր անմեղ և անվնասապարտ առա-
ջարկութիւնն ամենայն խոնարհամտութեամբ էտ
կառնենք: Ի վերջոյ,

Գ. Մեր աշակերտին մեզի ըրած ազգարարու-
թեանը, պատուասիրութեանը, աննախանձու-
թեանն, ու մասնաւորապէս իր առաքինական

տրամադրութեանը վրայ սխրանալով շնորհակալ
կըլլանք, և ի փոխարէն կըցանկայինք, որ եթէ
ասդին անդին ալ ասանկ ազնուախոհ ուրիշ աշա-
կերտներ ունէինք նէ, ամէնն ալ Կիւրեղէի առ-
ջինեկներուն, և կամ Բեթլէհէմի մանկանց հետ
ծնած ըլլային:

Խ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ



Ժ.

ՄԷՃՄՈՒԱ

ԿՐՕՆՔ, ՓԱՐԻԶԱԿ, ՄԻԻՆԱՏԻ, ՄԱՍԻՍ, ՄԵՂՈՒ
ԵՒ

ՀԱՅՈՑ ԱԶԳ

Քանի որ այս փտած չորս վիրաց զարշահոտու-
թիւնն յազգին մէջ կեցած է նէ, քիթերնիս թխելով,
հեռո՛ւ, հեռո՛ւ, շատ հեռու փախչելէն զատ ճար չու-
նինք: Վիհ մեծ է ընդ մեզ եւ ընդ ձեզ: Մեհմ .321:

Ծնունդք իժից, ո՛ր եցոյց ձեզ փախչել ի բարկու-
թենէն որ գալոց է. արարէք այսուհետեւ պտուղս
արժանի ապաշխարութեան: Առկ. Գ. 7:

Տեսեալ զնա Զրուանայ, ոչ գիտաց եթէ ո՛ր որ իցէ.
և հարցանէր, եթէ ո՞վ ես դու: Եւ նա ասէ. Ես եմ
որդին քո: Ասէ ցնա Զրուան. իմ որդին անուշահոտ
և լուսաւոր է, և դու խաւարին և ժանգահոտ ես...
այ սուտ և չարագործ, տուեալ լիցի քեզ Թագաւոր-
ութիւնն ինն հազար ամի: Եզն. Եղծ ֆեշին Պարսից:

Պատկեմ զքեզ՝ Մերութան, քանզի ի խնդիր էիր
Թագաւորել ի վերայ Հայոց. և ինձ ասպետիս պարտ
է զքեզ պատկել ըստ սովորական իշխանութեան իմոյ
հայրենեաց: Խորենացի. Գ. զլ:

Ա.

ՄԷՃՄՈՒԱ ԵՒ ԿՐՕՆՔ

Մեր ընթերցողները գիտեն, որ Մեհմուայի հետ
պզտիկ հաշիւ մը ունէինք լմնցունելիք: Քանի
մը օր ուշամալնուս համար՝ Մեհմուա կարծելով
թէ իր առնելիքը պիտի ուտենք, անցած առտու
յանկարծ իր 351^{րդ} թուովը, կամ թէ ըսենք, իր

քառասուներորդ վերջին խօսքովն եկաւ դուռերն իս-
ափ առաւ, որ արթննաւ, և ելլանք պարտքեր-
նուն մնացորդը հատուցանենք: Արթննալիք չու-
նէինք, որովհետեւ չէինք ննջէր, կընակէինք:

Ասորեստանի ազեաալի անցքերը, որ հալածե-
լոց վրայ բոլոր Ներուպայի գուծն ու կարեկցու-
ծիւնը շարժեցին, և հալածողաց վրայ ալ անոր
արդար ցասումը յուզեցին, քանի մը շաբաթ է ի
վեր հասարակաց հետ մեր լսելիքն ու միտքն
ալ կոտորածներուն հանապազօրեայ լուրերովն
այն կողմը ձգած ըլլալով, այն պատճառաւ էր,
որ առանց պարտքերն իս մոռնալու, Մեհմուսայի
և մեր ընծերցողացն առջին ահամայ պարտա-
զանցութեան ստիպուած էինք: Բայց պարտքը
չընիննար, և երկու շաբաթ առաջ հինգ շաբաթ
ետեւ միշտ պարտք է, և մենք ալ միշտ պատրաստ
ենք պարտքերն իս մեր ազգայնոցն ըստ ժամանա-
կին վճարելու: Թէ որ այս անգամ քիչ մը յապա-
ղեցինք նէ, ինչպէս որ ըսինք, դիպաց մտադիր
էինք, և այն մտադրութիւնն իս ալ թէ մեզի և թէ
մեր ընծերցողացը համար շահեկան իմաստներ
բերաւ սոսկալի և ողբալի կոտորածներուն երկրէն:

Վասն զի, իրար անցած երկու ժողովրդոց մէ-
կին ազեալից և միւսին խժոժութեան պատճառները
վնասը լով, տեսանք, որ կրօնից կիրքն է դար-
ձեալ այս աւերածներն ընողը: Արօնք կրօնքի
ընդհարկանելով ի ներքուստ, մարդիկ ընդ մարդ-

կամ կոգորին արտաքուստ, և անգթաբար իրար
կապառեն կոր յայտնապէս, և տասնութիններորդ
դարն ալ դեռ չկրնար կոր այն կողմերը ոչ աւե-
տարանով և ոչ իմաստասիրութեամբ մարդկային
զազանական կիրքը ցածուցանել. անոր համար, որ
ծեծկուողները ոչ աւետարանին հոգին գիտեն և ոչ
իմաստասիրութեան սկզբունքը կրճանջան, այլ
սլարզապէս զիրենք առաջնորդողներուն կրիցը
ծառայելով, մեքենաբար իրար կըջարդեն կոր:

Այս դիտողութիւնները մեզի յիշեցուցին, որ
մեր մէջն ալ այս տարուան անցած կռիւները
կրօնքի վրայ էին, և ըստ այնմ մեզի միտ տու-
ին մեր ազգայնոց առջին այս յօդուածիս սկիզբը
սա խորհրդածութիւնն ընել: Այսինքն, միտք ըզ-
միտք կրնայ աւելի կամ նուազ դժուարութեամբ
համոզել, բայց կիրք զկիրք չկրնար համոզել եր-
բէք. կրնուաճէ, այլ չկրնար խոնարհեցուցանել,
և հակառակութիւնը մահուամբ կըլըմննայ վեր-
ջապէս:

Ամենեւին կրօնք կրօնք մը համոզելով լռեցու-
ցած հրաժարեցուցած և դադարեցուցած չունի:
Կրօնք մը միւսին տեղի տալէն առաջ ժողովուրդն՝
անագին կոտորածներու նշաւակ ըլլալով, մէկը
միւսին փլատակացը վրայ ամբարձած է. վասն
զի, կրօնք, թիւր կամ ուղիղ, միշտ կիրք եղած է
կրօնամոլից հոգւոցը մէջ:

Ինչ կընշանակէ Մեմուլայի պէս յեղյեղուկ

Թերթի մը կրօնքը : Մենմուայի հոգւոյն և գործոցը նայելով , մէջն այնչափ կրօնք կայ , որչափ որ ամուլ ստեանց մէջ կամեն : Բայց կրօնքի մը արքանեկութիւն ընելէն ի վեր , տես այս անտարբեր Թերթն ինչ անտեղութենէ անտեղութիւն , ինչ հակասութենէ հակասութիւն , ինչ ժպրհութենէ ժպրհութիւն , ինչ անիրաւութենէ անիրաւութիւն , ինչ զրպարտութենէ զրպարտութիւն , և վերջապէս ինչ խստասրտութենէ ինչ անօրէնութիւն զընաց հասաւ : Առաջ , Ես ժամանակին այս օրագիրն ազգիս բարւոյն ծառայելու համար հաստատեցի ըսաւ , ետքը , Ես այս օրագիրն իմ զբօսանացս համար կըզրեմկոր ըսաւ : Առաջ , Դուք մեր եկեղեցականները ծաղրեցիք ըսաւ , ետքը , Հայոց քահանաներուն մօրուքն ածիլեց : Առաջ , Հռոմայ եկեղեցւոյն զրպարտութիւն կընէքկոր ըսաւ , ետքը , Հռոմայ եկեղեցին տուներնիդ տնրմատաղին ընելու հրաման ունի աւետարանէն ըսաւ , Առաջ , Սուրբ զիրքը , ձեր սուտերուն վկայութիւն բերիք ըսաւ , ետքը , Կնիկն երկրնէն զատելու համար Ղուկաս աւետարանչին սուտ-վկայութիւն ընել տուաւ : Առաջ , Ձեր կծու խօսքերովն ազգին մէկ մասին սիրտը խոցեցիք ըսաւ , ետքը Պօղոս պատրիարքի օրովն եղած զխատութեանց ոճիրը հիմակուան սերունդին երեսը զարկաւ : Առաջ , Ազգին երկու մասին մէջ նոր տաքցած սէրը դուք պաղեցուցիք ըսաւ , ետքը , Հազար ութը հարիւր

Եռսուն Թուականը մեզի համար նուիրական
Թուական մըն է ըսաւ : Առաջ , Հռոմէական եկե-
ղեցին քանի մըն ալ Հայ գտնուելու հրաման կու-
տա՞ք ըսաւ , Ետքը , Լուսաւորչէն աւելի լուսա-
ւորջական Միւնասիյից փռոթեամբն ես ըսաւ :
Առաջ , Ինծի վնասելու անգթութեամբ սուտ Թուղ-
թեր կըկարկըտէքկոր ըսաւ , Ետքը Մասիսն ու
Մեղուն զրպարտելով մատնեց :

Ահաւասիկ , ամիս մը առաջ մաքուր ազգասի-
րութեան պարծանք ընող Թերթը , երկու ամիս
ետե կատարեալ մարդատեաց մը եղաւ , և կրօնքի
ատելութենէ հոգւոյն մէջ ծնած կիրքն այնքան
զայրացեր էր , որ Մուշէն մինչև Իւջ-քիլիսէ հոգ-
մերէն ու տարածութենէն իր ոսոխներուն համար
մահ հայցելով , արշաւանքը մատնութեամբ լմըն-
ցուց : Ի՞նչ տուներ պիտի կործանէր արդեօք այս
լեզուն , ի՞նչ գերդաստաններ սուգերու մէջ պիտի
ընկղմեր , Թէ որ ժամանակը փոխուած , և մեզ
պաշտպանող պետութեան նոր օրինօքը կեանքեր-
նիս ապահոված չըլլար : Ահաւասիկ կրօնական
կրից չար արդիւնքը , որ Թէպէտ մեծ չէ , որով-
հետե աւելին ընելու կարողութիւն չունէր չա-
րեացապարտ կրօնամուր կամ կրօնակեղծը , բայց
որչափ որ պզտիկ ըլլայ , կրից մեծութեանը բա-
ւական ճաշակ ու վկայութիւն մըն է :

Մենմուայի վրիպակները մարդասիրութեամբ
ուղղագրած տեղերնիս , վերջինը յանկարծ աչու-

նուստ առջին Մովսէսի գաւազանին պէս վիշապի
փոխութիւնով, տանը մէջ նախ Փորիզակը թեթեւա-
բար, ետքը Միւնասին կնեց դառնապէս, և տու-
նէն դուրս ալ Մասիսն ու Մեղուն խածաւ չարու-
չար: Մեմփուայի ձեռքին մէջ այս գաւազանն օձի
փոխողը ճիգութիւթութիւնն ու թոյնը առնողը կրօ-
նամոլութիւնն ըլլալուն, կրօնամոլութեան նկա-
րագիրն ազդեցութիւնն ու արդիւնքը մեր ընթեր-
նողացն ընտանի օրինակաւ բացատրելու համար,
Հայ օրագրաց գէմ Մեմփուայի ըրածները քննենք:

Բ.

ՄԷՃՄՈՒՍ. ԵՒ ՓԱՐԻԶՍԱ

Մեմփուա իր ոսոխներուն հետ վիճած ատենը
նիւթ մը կար, որ մենք ընկերական է ըսինք և
ապացուցինք, և ինք խնդիրը մեծցունելու և Հա-
յերը պարտաւոր ձգելու համար կրօնական է
ըսաւ, և չիկրցաւ հաստատել: Ընկերական կամ
կրօնական, այնչափ մեծցունելէն ետև, նիւթին
վրայ վիճելու իրեն ինչ տարերք կը պահակէին:
Բարէ, ամմէն բան կար, բայց մեր չար բաղդէն
իրեն լոյս և ողջմտութիւն պահակելով, Մեմփուա
ուրիշներն ամբաստանած տեղը, ինք երբէք նիւ-
թին վրայ չկեցաւ, և միշտ դուրսերը թափառե-
լով, իր ոսոխներուն հետ անդադար նոր վէճ և
և նոր կռիւներ յուզեց: Երբեմն բարոյախօս, եր-
բեմն դատաւոր և երբեմն բռնաւոր ձեւանալով,

մէկուն մէջ ալ չկրցաւ ոչ ընդերկար և ոչ հաստատ
մնալ, և յարափոփոխ ու անըմբռնելի Պրոթէոս
մը եղաւ ամենուն համար:

Այս փախուստներն աւ նիւթ և կէտ փոխելն իր
տկարութեանը գուշակ ըլլալով, իր անհմտութիւ-
նը պատրուակելու ջանքն իրեն կրներէինք, թէ
որ նպատակը փախչել և միանգամայն վնասել
չըլլար: Բայց ամէն մէկ անգամ դէմք և դիրք
փոխած ատենը, անօրինաւորաբար ձեռք առած
նիւթն իր ռոտխներուն իր դէմը խօսելու համար-
ձակութիւնը պատուհասելու համար, և անոնց կ'ամ
հացին և կ'ամ վարկին վնասակար ըլլալով, ինչ-
պէս փախուստը, նոյնպէս և միջոցներն ալ ամօ-
թալի էին: Համառօտաբար խօսինք առաջ Փա-
րիզակի դէմ ըրածին չըրայօք:

Փարիզակն իբրև Հայ օրագիր, իր 11^{րդ} թուովը
Մեմֆուայի դէմ Մշեցւոց պաշտպանութիւն մը
գրեց: Մեմֆուա այս յօդուածին պատասխան
տուած ըլլալու համար, սկսաւ թերթին չափն ու
տարածութիւնը, տողերուն ու գիրերուն թիւը,
կրթերուն կոտորածն ու տառերուն այլակերպու-
թիւնը, նիւթերուն հետեւակութիւնն ու մկան
պատմութեան անպիտանութիւնը նշանակել, և
էն վերջը Փրկչի Էն մկնոտ մէկ տեղը եւ նա ծնաւ
մուկն չնչին վերտառութեամբ արձան մը կանգնեց
այս թերթին: ⁽¹⁾ Զուարճաբանութիւնը քննաբանու-

(1) Մեմֆ. 339:

Թեան հետ անհամբոյր չէ. և մեր սկզբունքն ուղ-
ղադատութիւն ըլլալով՝ կըխոստովանինք, որ ոչ
միայն Փարիզակ, այլ և ինքն ալ միւսն ալ և ամմէն-
նիս ալ խիստ քննաքանութեան սկտք ունինք:

Թէ որ Մեմուա հարկաւոր կարողութեամբ
քննաքանութեան գաւազանը ձեռքն առած զար
գլխնուս վերեւ մեզմէ համար պահանջելու ըլլար
նէ, մենք արհամարհոտներն իրենց յոռի ճակա-
տագրին յանձնելով, հլուաց հետ իր առջին ծունկ
կըչոքէինք, և անձկութեամբ խրատ կառնէինք:
Բայց թող որ քննաքանութեան գաւազանն առաջ
մեր ձեռքը 'քանի մըանգամ իր վայրենացեալ
զրչին վրայ խորտակելու սկտք կար, այլ և,
այս առթին մէջ իր նպատակը Փարիզակի վարկը
կոտրել, և յաճախորդներն ու ընթերցողները
պակսեցունել, և ոչ թէ ազգասիրական քննաքա-
նութեան նպատակ մը ըլլալով, ըստ նիւթոյն ար-
ժանի եղածն ըստ պատեհին անարժան և անի-
րաւ էր, և ընկերին երեսն արձակած նախատին-
քը կըղառնար իր դէմքը կըծածկէր, որովհե-
տեւ ան օրերն ինք ալ անոր վրայ ստգտած պա-
կասութեան տւելի մեծն ըրած էր, որ անաւասիկ:

« Մեծն Նափոլէոնի հոգեզաւակ Մեծ Դքսու-

« հին Ստեփանիս ար Պատ, Գաղղիոյ այժմեան

« կայսրուհւոյն կարգուած օրը և նոյն վայրկե-

« նին մեռած ըլլալով, այս դէպքը յիշեալ կայս-

« րուհւոյն շատ մեծ ցու և վիշտ պատճա-

« ուեր է: ⁽¹⁾ — Ե՞բ մեռեր է դքսուհին: — Եօթը տարի առաջ. որովհետև կայսրուհւոյն ամուսնանացած օրը ⁽²⁾ մեռեր է: — Ե՞բ կըսըգայկոր կայսրուհին անոր մահը: — Եօթը տարի ետև. որովհետև Մեհմուա 1860 լիւար. 6^ի կըսպատմէկոր այս լուրը: — Եօթը տարիէ ի վեր Մեհմուայի խելքն ուր էր, որ լուրն ազը դնելով, Եօթը տարի ետև հաներ առջևնիս կըդնէ: — Թերեւս ան ատենը լսած չէ եղեր, կամ զուցէ դքսուհւոյն մահը մինչև հիմայ կայսրուհիէն ալ սրահուած ըլլալով, ան ալ նոր իմացեր և լացեր է, Մեհմուան ալ նոր եղածը կըսպատմէկոր: — Բայց թէ որ դքսուհին նոր մեռած ըլլայ նէ: — Ան ատենը Մեհմուան ալ կայսրուհւոյն նոր կսկիծը տաք տաք պատմած ըլլալով կարդարանայ: — Բայց կայսրուհւոյն ամուսնութեան թուականն ինչ ընենք: — Մեհմուաի յորելինին վրայ զարկ, որ ութը տարի վաստըկի:

Փարիզակի մշնավէպը քաշկռտող Մեհմուան է արդեօք, որ Եօթը տարուան գիշերներն ու ցորեկները զուգելով այս պատմութիւնը հիւսեր է, որուն մէջ թուականները, գրողին խելքին պէս տեղատուութիւն ու մակընթացութիւն ընելով, այս տարուան մեռնող դքսուհին Եօթը տարի առաջ կըմեռնի, և Եօթը տարի առաջ ամուսնացած

(1) Մեհմ. 555. (2) 10 Յունուարի, 1853

կայսրունին ալ առ տարի կը պատկուի : Պքսունին մեռեր, չենք գիտեր եք, կայսրունին լացեր, ան ալ չենք գիտեր եք, ասանկ խառնախառն պատմութենէն ինչ օգուտ կայ ընծերցողաց, որ Մենմուան արժանի համարեր է գրել, և Փարիզակի մը կան ճուշտ հրաման չի տար : Ասոր պատասխանը վերը ըսածներնու յայտնի է. այս ինքն, Մենմուա մկան գլուխը ճգմելով, իր դէմը խօսելու յանդգնող օրագրին գլուխը ճգմել կուզէր : Բայց ինչ և իցէ, Փարիզակ այսչափով աժան ազատեցաւ, անդին Միւնասիյի բաշածները նայինք :

Գ.

ՄԷՃՄՈՒԱ ԵՒ ՄԻՒՆԱՏԻ

Միւնասին ազգասէր թերթ մըն է. գրիչը, ինչպէս կը լսենք, Վեսարացի և եռանդոտ : Իր ազգասիրութիւնն օժտելու համար լեզուասիրութիւնը կարեւոր ճանչցեր, և իր լեզուագիտութեամբն արդարև իր ազգասիրութիւնն ու գրագիտութիւնն ընդարձակեր, և իր արեան բնաւորական եռանդն ալ բարեխառնէր է : Միւնասին իր այս բարեխառն ազգասիրութեամբը Պօլսոյ մէջ Մշեցւոց պանծալի դատին արժանաւոր փաստաբան մը պիտի ըլլար Մենմուայի դէմ :

Խնդիրն իրօք քաղաքական էր, բայց ճիշդութեամբ ինչն անիկայ կրօնական անուանելով, նորագիւտ աւետարանով մը կը մարտնչէր : Միւնա-

սի, ոչ իբրեւ սնուարար աստուածաբան, այլ իբրեւ միամիտ քրիստոնեայ սուրբ զիրքը սորվեր, և ինչպէս հրապարակագրի մը անժխտելի պարտքն ու պայմանն է, առաջադիւծալ նիւթիւն վրայ զիտութեամբ և զիտակցութեամբ պիտի խօսէր, և ոչ թէ հոգմ արածելով և խօսելու համար միայն խօսելով, լեզուաագրութիւնն անհմտութեան պատրուակ պիտի բռներ, որ սաօր ընծերցողաց տկանջները քիչ մը մարմանջեցունելէն ետեւ, վաղը զրոգին գռեհկութիւնն ու տգիտութիւնը կը նշաւակէ: Նւ յիրաւի, Միւնասիյի թերթերէն ձեռունիս անցածներուն նայելով, կը տեսնանք, որ Մուշի զատասացութեանը մէջ իր ընծերցողներուն վատահոլութիւն և ոչ նախատինք եղած է: Ուստի բերկրութիւն կը համարինք մեզի, իբրեւ ազգային բանասէր իր ազնուախոհութիւնը հրապարակաւ շնորհաւորել, և իր զրչին կերպաւորութեան կատարելութիւնը մազթել:

Արդ, Մեհմուա անգամ մը այս կտրիճ ախոյեանին դէմն ելլալէն ետեւ, ինչինքը բոլորովին կորսնցուց, և ոտոխն ալ քիչ քիչ ինքզինքը գտաւ: Մեհմուա իր բնաւորական հեզութեանը հակառակ վեր վեր կըցածկէր, կըզայրանար, կազազակէր, Միւնասի իր բնաւորական եռանդոտութեանը հակառակ, հանգարտ կըկենար, կըխորհէր, կըպատասխանէր: Մեհմուա կըթշնամանէր, ասդիյինը կըփաստաբանէր: Մեհմուա ճիզուիթ կըլլար, աս-

դիյինի մարդ կըմնար: Մեհմուլա սոփասցումիւն
կընէր, ապիւյինը քրիստոնէութենէ դուրս չէր ել-
լար: Մեհմուլա դատէն դուրս, լեռնէ լեռ, սարէ
սար, ձորէ ձոր, փաստ փնտրուելու կըվազէր,
ապիւյինը Մուշի յաւէժայիշատակ դաշտին կեդ-
րոնն անստամն կեցած, իր մուրեւալ ստիսի վե-
րադարձին կըսպասէր:

Քաջ է. հին Հայր նորընծայ ճիզուիծին համբե-
րումիւնը հատցուց, և ահա նեղսիրտ ճիզուիծը
նեղմիտ Տոն Քիշոթ, որուն անունը արդէն քանի
մը անգամ ինք հռչակեր էր իր Մշականներուն
մէջ, առանց իրեն օրինակ բռնած դիւցազին վը-
րայօք ընծերցոյցայ ծանօթութիւն մը տալու:
Տոն Քիշոթ, վեշտասաներորդ դարուն մէջ, Մի-
քաէլ Չեռվանթէս Սպանիացի անուանի մատե-
նագրին յօրինած մեծ վիպասանութեան դիւցա-
զունն էր, որ իր արշաւանացը մէջ օր մը հեռու-
էն հողմազացներ տեսնելով, հսկայից խումբ
կըկարծէ, և սուրը քաշած, վրանին կը զիմէ որ
հետերնին ծեծկուի: Արծեծկուի, բնքէ, և հողմա-
զացքին թեւերը դարձած տեղերնին զինքը գեա-
նէն կըվերցունեն, և ի քթեւ ահան Մուշի աղ-
ղոտայէն Իւչ-քիլիսէի վոնքը կընետեն: Ահաւո-
սիկ Մեհմուլայի վիպասանութեան համառօտու-
թիւնը:

Մեհմուլա՝ համբերութիւնը հատած օրը, սոյն
Տոն Քիշոթի պէս սուրը քաշելով յարձակեցաւ.

Միւնասիյի վրայ, — Աէլ, ըսաւ, սիւքիւթ մահ-
 « վազազը, կէլ, էթրաֆ սիւզկէնի, կէլ շու խան-
 « չէրինի գընընտան չէք պազալըմ, ճէվհէրին նէ
 « տիր աղնայալըմ: ⁽¹⁾ » Եւ այս մեծասաստ ըս-
 պառնալեաց ձայնէն դողալով, ծաղկազարդի
 օրհնութեան հռչակաւոր քերօքէները ահանջնին
 տնկած, Մեմնուայի տապրանը կը վազեն, որ խմա-
 նան թէ՛ խնչ ըսել է սիւքիւթ մահվազասը եւ եր-
 րաֆ սիւզկէնի: Իրենց բարեբաղդութենէն Բա-
 դաամու թարգմանը հոն գտնուելով, — Բոն չի-
 կայ, կըսէ, ահանջեղ քերօքէներուն. Մեմնուա
 կը մարգարէանայկոր, և վասն այնորիկ Փրկչի
 բնակչաց լեզուովը կը խօսի, որ դուրսէն եղող-
 ներն առանց ան տեղի քերականութիւնը սորվե-
 լու չեն կըրնար հասկնալ: »

Մեմնուա այս սպառնալեաց վրայ միւս պերճ
 և սապետական սպառնալիքն աւելցուց, որ հի-
 մայ Հայոց մէջ առակ եղած է, և առջինին պէս
 անխմանալի չըլլալուն, կընամբ թարգմանել:
 — Թէ որ, կըսէ, խրատնիս մտիկ չընելով այս
 « ափեխցփեխ վէճերը պիտի շարունակես նէ,
 « զիտցած եղի, որ քեզի խաղք ու խայտառակ
 « ընող գրիչ մըն ալ կը գտնուի: ⁽²⁾ Մանաւանդ

(1) Մեմն. 359:

(2) Մեր ընթերցողները գիտեն, որ Մեմնուա այս խոստումը
 Միւնասիի վրայ կատարելու ատեն չունենալով, երդումը ոտ-
 քի տակ չառնելու համար բարեկամաց ձեռօք իր վրայ կատա-
 րել տուաւ:

« հիմակուան գտնուած վիճակիդ մէջ այնչափ
« ղիւրին բան մըն է, որ մենք բնաւ բան մը չգը-
« րելով ալ, մինակ գրաշարներուն ըսենք թէ,
« ձեռուներնուդ հանդիպած աղիւսակներէ մէյ-
« մէկ զիր տռնելով, ըստ քմաց (չըզարդընայ)
« բան մը շարեցէք, տակաւին քու գրած անի-
« մաստ խօսքերէդ գերազանց և պատուական
« բան մը ելլալուն տարակոյս չունինք: ⁽¹⁾ »

Միւնասի կատարեալ խենթ ըլլալու է, որ այս
աներկուանալի ճշմարտութեան վրայ տարակու-
կուսի. և մենք ի փառս ազգին և ազգային ձեռա-
գիտութեան բնաւ չենք տարակուսիր, որ Մուշի
դատին վրայ ի սկզբանէ մինչև վերջը Մեմուլայի
գրած ընտիր դատաստացութիւնները բոլոր, այն
գրաշարներուն չըզսրդընա շարածները չըլլան:
Կեցցէ Միւնէնտիսեան պատուական Պ. Յօհան-
նէսը, որ իր ազնուական հանճարովը ոչ միայն
հայկական, այլ և տաճկական տաղաճրութիւնն
ալ լիապէս օժտելէն ետև, ի պարծանս Հայոց և
ի զարմանս աշխարհի, Պրոմէթէոսի մարդակազ-
մութեան գաղտնիքն ալ բնութեան ծոցէն գողնա-
լով, մարդամեքենայներ ալ յօրիներ է, որ Մեմ-
ուլայի պէս ատեն չունեցող գրագիտաց համար
չըզսրդընա խորհելու, չըզսրդընա շարելու, և չըզ-
սրդընա դուրս տալու մեքենական հրաշք պիտի

(1) Մեմ. Անդ.

գործեն եղեր: « Յափա հարէր ամենայն հեծա-
նութ, » և այլն:

Մենմուա Միւնասիյի ըրած սպառնալիքն առ
օրին հատարելով, անիկայ Հայոց առջին խաղը
ու խայտառակ ընելու համար մարդամեքենայնե-
րուն հրաման տուաւ, որ չըզտըրնա բանական
կայծակ մը արձակեն Միւնասիյի գլխուն. անոնք
ալ մեքենաբար խորհելով և շարելով, սա՞ խօս-
քերն արտադրեցին: — Ամէն գրածներդ Տելե-
« մաքի Թարգմանութեանդ մի նմանցուներ, վասն
« զի Ֆէնէլոն ողջ ըլլար նէ, անանկ տիեզերա-
« հռչակ բանաստեղծի մը գործը Թարգմանել
« կարծելով աշխարհի առակ ընելու յանդգնու-
« թեանդ համար, Գաղղիոյ պետութեան առաջար-
« կութեամբ ինքզինքդ փրանկան կըզտնայիր,⁽¹⁾:

Ուրրմն հազար և միլիոն փառք Աստուծոյ, որ
Լըսած ալ ատենին մեռեր է. վասն զի թէ որ ան
ալ ողջ ըլլար նէ, Կաղ սասանայի անճարակ
Թարգմանիչն ալ Գաղղիոյ պետութեան առաջար-
կութեամբն անշուշտ ցիցն ելլալով, նվ պիտի
Մենմուա գրեր առօր, նվ պիտի մարդամեքենա-
ներ խաղցուներ, և նվ պիտի մեզի այսչափ մեծ
բարկենտանքի հանդէսներ ընծայեր: Մենք առ-
անց անկողնասիրութիւնը ձեռքէ ձգելու, չենք
կըրնար Տելեմաքի Թարգմանութեանց առհասա-

(1) Մենմ. Անդ.

րակ ոչ ոսկի և ոչ պղնձի մինառալ նուիրել, բայց
բանը հոս ալ ոչ բանասիրական քննաբանութիւն
այլ Միւնասիյի սնունը կտորելու և թխերը պակ-
սեցունելու տմարդութիւն մը ըլլալով, հոս ալ
զարձեալ, Կաղ սասանայի թարգմանութիւնն իր
թարգմանչին ահանջը Միւհէնտիսեանին սեմացը
վրայ կըգամէ, որ ամէնէն առաջ Տելեմարի թարգ-
մանին երթայ իր մօրուքն աներկիւղ շոյէ :

Եւ սակայն, Մեմփուայի փոքրոգութենէն ալ,
մենք իր բարձրամտութեանը հետ ահանջի ետե
կըձգէինք, թէ որ իր բանասիրութիւնը միայն
գրականութեան վրայ ամփոփուած մնար : Բայց
Մեմփուա իր վրէժխնդրութեան ծարաւն առով
մարել չիկրրնալով, քիչ մը ետքը թողուց Միւ-
նասիյի թարգմանութիւները, և ազգին առջև ուղ-
ղակի անոր անձին և գիտակցութեանը հետ զար-
նուելով, Միւնասին ոչ միայն անհատաբար
բողոքականութեան հակամէտ ցցունել ուզեց, այլ
և սնդեց, թէ Միւնասին բոլոր ազգը բողոքակա-
նութեան զգայակից համարած է :

Հայոց եկեղեցւոյն այս բարեկամական ազդա-
րարութիւնն ընդն ո՞վ ըլլայ նէ աղէկ : Մարդ մը,
որ երեկ իր լուսաւորչական ըլլալուն վկայական
կըհայցէր անոր պատրիարքէն, և առօր, Սելվի
հանրմը, Մուշի Մագդաղինացին ⁽¹⁾ նոյն եկեղե-

(1) Մեմփ. 349 :

ցիէն քեցելու զուրս հանելու համար կըլլիկոր :
Մարդ մը, որ երեկ առտու հռոմէական, ցորեկը
լուսաւորչական, իրկուան դէմ մահմէտական,
արեւամտին բոլորովին անտարբեր, և կէս զիշե-
րուն ալ ճիգովի՞նք եղած է, և ասկէ ետեւ ալ դեռ
քանի՞ հաւատք՝ քանի՞ խիղճ՝ և քանի՞ գիտակցու-
թիւն փոխելիքը աստուած ալ չիյալ :

Ահաւասիկ այս կրօնափոխութեան շրջմովիկ
Պրոքեսն է, որ յանկարծակի զլուխն իր ուրա-
ցած եկեղեցիյէն ներս խոնկելով, « Միւնասին
Հայոց ազգը բողոքականութեան համաձայն կը-
գտնակոր ⁽¹⁾ » պոռաց, և Միւնասիյին ալ ըսաւ որ :
« Քսանըմէկերորդ թիւդ ազէկ պահէ, օր կըլլայ
« որ պէտք կըլլայ. բայց գիտցած եղիր, որ ազգդ
« բողոքականութեան զուգընթաց գտնալուդ հա-
« մար քեզ չիկրրնար ազատել » : Ընթերցողն ինչ
կըհասկընայ արդեօք այս սպառնալից գուշակու-
թենէն : Արդեօք այս կրօնական բազդախնդիրն
օր մըն ալ Հայոց եկեղեցւոյն մէջ սրբաքննիչ
պիտի ըլլայ. կամ թէ արդեօք Հայոց եկեղեցւոյն
մէջ մեղանշողները Հռոմայ եկեղեցւոյն առջին
սխառասխանատուն պիտի ըլլան :

Մարդ մը ուզած կրօնքին հետեւելու անձնիշ-
խանութիւն ունի, և Մենմուային ալ հինցած կօ-
շոկի պէս քանիմը տարին անգամ մը կրօնք

(2) Մեմ. 541 :

փոխելուն խօսքը չէինք ըրած, և ընելն ալ մեր
ազատամտութեանն ամօթ կրնամարելինք, թէ որ
Հայու մը դէմ իր ըրած վատմար բանասրկու-
թիւնը կրօնի վրայ չըլլար : Եւ որովհետեւ իր ան-
կարգութեամբը մեզի իրաւունք տուաւ, նոյն իրաւ-
ամբկրնարցունենք թէ, ամմէն կրօնք ընդունող
և ամմէն կրօնք ժխտող յեղամիտ մը ինչպէս
կրնամարձակի ուրիշի կրօնքը կասկածելի ցցու-
նել և ուրիշ եկեղեցւոյ խորհուրդ տալ, երբ
մարդիկ ալ ըստ կրօնից իր խօսքը չեն պատուէր,
և իր զգածմանցը չեն հաւատար :

Բայց ինչ ըսեր է արդեօք Միւնասին Հայերը
բողոքականութեան համամիտ ցըցունելու հա-
մար : « Արեւմտեան եկեղեցւոյն ամրափակ դուռ-
« ներն իրեք հարիւր տարիյէ ի վեր բողոքակա-
« նութեան դարբնութիւնը բացաւ, և միլիոնաւոր
« ժողովուրդներ դուրս յորդեցին ⁽¹⁾ » : Այս յայ-
տարարութիւնը Միւնասի իր կողմէն կրնէկոր,
թէ Հայոց ազգին բերնէն : Ի՞նչ ապշութիւն կամ
ինչ խարժախտութիւն պէպք է, որ մարդ անհա-
տին ըսածը, ազգին բերնէն կամայ կամ ակամայ
զուրցունել տրուած դաւանութիւն կարծեցունե-
լու աշխատի :

Բայց թէ և Հայերն ալ բոլոր Միւնասիյի միա-
ձայնութեամբ այս խօսքն ըսած ըլլան նէ, ինչ

(1) Միւնասի, թիւ. 12 :

բողոքականութիւն ըրած կըլլան : Ասիկայ պատ-
մական ճշմարտութիւն մըն է, որ բերնէդ հանեա
կամ չհանեա միշտ ճշմարտութիւն է, և խօսելի
ալ քու հաւատքիդ չիղաչիր : Մովսէս խորայե-
լացիները Նգիպտոսէն չիհանայ : Հանեց ըսելով
Հայերն խորաէրացի կըլլան, թշուառական : Ու-
րեմն բողոքականութիւնն արեւմտեան եկեղեցին
պարպեց ըսելով Հայերն ինչպէս բողոքական կըլ-
լան : Այս խօսքը հռոմէական մը ըսելու ըլլայ նէ,
Թերեւս անոր ամօթ սեպուի, իր եկեղեցւոյն կո-
րանքն ու առականքը յայտնած ըլլալով : Բայց
Հայոց եկեղեցին բողոքականութեան և հռոմէա-
կանութեան դէմ միապէս անստատան կեցած աեզը՝
ինչո՞ւ պիտի քաշուի արեւմտեան եկեղեցւոյն
անդամատութիւնը բարձրածայն պամելու, երոր
Մեմուա մեզի բարձրածայն կազդէ թէ, դուռ-
ներնիդ ազէկ գոցեցէք, չէ նէ, արեւմտեան եկե-
ղեցին տուներնիդ տակնու վրայ ընելու թոյլաու-
թիւն ունի աւետարանէն :

Արդեօք Մեմուա կըկարծէ թէ՝ տուներնիս
տակնու վրայ ընելու դարանակալ հռոմէականու-
թիւնն աչուներնուս արդար եղն է. կամ կըկարծէ
թէ՝ օր մը Հայերը բողոքականութեան երեսնէն
նեղն իյնալու ըլլան նէ՝ հռոմայ եկեղեցւոյն ծոցը
կըղկմէն : Լուծէ պատրանքդ, խաբուսիկ փառ-
տաբան. արջէն փախչողը ի՞ժին որջը չապտաստու-
նիր, և Հայոց եկեղեցին ալ բողոքականութեան

երեսէն նեղն իյնալիք չունի : Հայոց եկեղեցին
բողոքականութիւնն ու հռոմէականութիւնը միա-
պէս կըմէրժէ, բայց առջինէն վախ չունենալով,
երկրորդէն կըզգուի, վասն զի, բողոքականու-
թիւնը աշխարհք բերողն արեւմտեան եկեղեցւոյն
զեղծմունքն եղաւ :

Դ.

ՄԷՃՄՈՒՍ, ՄԱՍԻՍ, ՄԵՂՈՒ

ԵԻ

Հ Ա Յ Ո Յ Ա Ձ Գ

Մեմֆուայի կոմէն Միւնասիյի դէմ եղած չարու-
թեան էն մեծն ալ ազգային նիւթոց վրայ և ազգին
մէջ ըլլալուն, թէպէտ և անարժան, բայց անվնաս
էր : Վասն զի, ազգայինք ամբաստանելոյն իրա-
ւունքն ու ամբաստանողին անիրաւութիւնն ու
ոխակալութեան պատճառը զիտնալով, անտարա-
կոյս, Միւնասին Մեմֆուա գրելու չէին խրկեր,
և Մեմֆուան ալ Միւնասի շարադրելու չէին հրա-
ւիրեր : Բայց Մասիսի և Մեղուի նկատմամբ
Մեմֆուայի ըրածը, զրականութենէ, կրօնքէ, և
ազգէն ալ դուրս, քաղաքական ամբաստանութիւն
և պարզապէս համարձակաձայն մատնութիւն մըն
է, որ Մասիսի և Մեղուի պատճառաւոր բոլոր
ազգին և ազգէն վրէժ առնելու համար ըլլալով,

մենք այս մասն իբրեւ բովանդակ ազգին դատա-
սացութիւնը կըզրենք :

Մեմուա, ինչպէս որ բոլոր Տաճկաստանի և
Թերեւս Ռուսաստանի Հայոց ալ յայտնի է, Մուշի
մէջ ապօրինաւոր անիրաւ և անկարելի դատի մը
ձեռք զարնելով, իր առաջին փորձին մէջ նենգա-
ւոր բազդին ձեռքէն անանկ ուժգին և անակըն-
կալ ապրտակ մը կերաւ, որ ուղեզը բոլորովին
խախտելով դղրդելով, իր խորհուրդները՝ մեղ-
ուաց կոտորածին օրը փեթակէն դուրս փախչող-
ներուն պէս, ուր գիմեւնին չգիտցան : Ասիկայ,
անփորձ՝ անխորհուրդ՝ և անճանախար Մեմու-
ային համար առաջին դաս մըն էր, որ Հայոց
ազգէն առատաձեռնաբար ձրի տրուեցաւ իրեն,
Թէպէտ և ինք շատ սուղ վճարեց Հերմէսի :

Բայց երկրի վրայ զգատտութեան խրատ առ-
նողներուն ամէն ալ խրատէն շահելու խորա-
գիտութիւն չունին, և ամէն անզգամ մէկ ապ-
տակով չզգաստանար : Մեմուան ալ մարդկային
ազգին շփացած և անուղղայ զաւկներէն ըլլա-
լուն, այս աշխարհածայն ապրտակն ու խաղքու-
թիւնն իր անզգատտութեանը բաւական չհամարե-
ցաւ, և հարուածին Թմրութենէն քիչմը սթափելուն
պէս, իր պարտութիւնը՝ կորանքն՝ ու ամօթը
մոռցունելու համար, Եւջ-քիլիսէի կողմը նոր
արշաւանաց՝ այս ինքն նոր խաղքութեան պատեհ
մը գտնալով, կազուկուր հոն գիմեց : Բայց հոն-

ալ դարձեալ իր հին որսորդներէն երկուքը, Մասիսն ու Մեղուն իր հետոյ վրայ տեսածին պէս, Մեմֆուայի բոլոր զայրոյթն ու յուսահատութիւնն իր կուրծքը վազելով վերջին ոյժ մը եղաւ, և այն ուժով Մեմֆուա մոլեգնած, ազազակ մը ձգեց, որուն վերջին քառն անաստուածութիւն և մահ էր, և որով, լուսաւորչական Հայոց ազգին հետ Մեմֆուայի հաղորդութիւնն սպառապուռ կտրեցաւ հատաւ : Նկարագրենք եղածները :

Իւջ-բիլիսէի վանքին մէջ Հայոց ծերունի առաջնորդն առտու մը երկամոյ ճարակ, կտոր կտոր եղած կըզտնուի : — Ո՞վ է արդեօք այս սոսկալի եղեռնադործութեան հեղինակը : — Աեցիր, Թշուառական, որ խեղճ ծերունւոյն չարատանջ մահն ողբանք վայրկեան մը. վասն զի, « Ելեալ հոգին անդրէն ոչ դառնայ » քու իրար անցնելովդ, և սպանողն ասօր ի՞նչ է, վաղը և միւս օրն ալ նոյն պիտի ըլլայ : Բայց Մեմֆուա ինչպէս դապէ իր սրտին անհամբերութիւնը, և ինչպէս քնանայ. պատեհն իր չար հրեշտակին Թևերուն վրայ հեծած, առաջանորդին արեան ջերաջերմ ծուխերովն եկեր զինքը կէս զիշերուն ներշնչեր է, և Մեմֆուա վանքին վարդապետները սրբաքննութեան մարդաճիւղներուն զործակից ցցունելու, և անով, Մուշի մէջ Հայոց երեսէն կրած անարգանաց վրէժն ատնելու առիթը գտեր է :

Անշուշտ, մենք Թշնամիէն քարեկամի գործ և

բարեշնորհութիւն չենք ակնկալեր . բայց խորագէտ Թշնամութեան ընելիքը մտածելով, որովհետեւ առաջնորդին ու սպանողաց մէջ քաթովիկութիւն չիկար, Մեմուա գոնէ առ խորամանկութեան, Հայ օրագրաց քով ինք առաջին ըլլալու չէր այս լուրն ազգին մէջ գուժողը : Ընդհակառակն, Մեմուա լուրն առածին պէս, առատն կանուխ, դիւական ծիծաղով մը առդրները ցցելով հրապարակը կիջնայ, և կսկսի ամենայն խնամով Հայոց վանքին պատերը հասարցունել, և բարձրութիւնն ալ մինչև ամպերը հասցունել, որ դուրսէն ներս մարդ մտնալն անկարելի ըլլալով, ոճիրը վանականներուն գործն ըլլայ : Մեմուայի պէս զեղծամիտ Թշնամիյի մը բնականաւոր ընելիքն առ ըլլալով, իրեն մարդ բան չիկրրնար ըսել :

Բայց Մասիս ու Մեղու ալ ազգային ըլլալով, չէ Թէ ազգին Թշնամւոյն Թշնամի ըլլալնուն համար, այլ մանաւանդ ազգին անուանը նախանձալուզութեամբ, մարդասպանութիւնը կրօնաւորին ու աշխարհականին համար նոյն ոճիր և նոյն եղեռն համարելով, ասանկ ատելի ամբաստանութեան հետքն անգամ մինչև յետին Հայուն վրայ ալ չիգտնուելուն պիտի ցանկային : Թէ որ վաղն ամբխտելի ապացուցութեամբ հաստատուեր, որ չար բազդին ուզելովն առաջնորդն սպաննողը ոչ Թէ հասարակ վանական մը՝ այլ առաջակայ եպիս-

կոպտա մը եղած ըլլայ, և ոչ թէ հասարակ երկա-
թով մը այլ օժեալ խաշով մը մահացու հարուածը
տուած ըլլայ, Մասիսն ու Մեղուն բոլոր ազգին
հետ միաձայն այն մարդը դատապարտելէն, ու-
րանալէն, և մարդկային ու աստուածային դա-
տաստաններուն յանձնելէն զատ ինչ կրնային
ընել: Բայց մինչև բանին ստուգութիւնն իմացու-
իլը, Մասիս ու Մեղու հարկաւ Մենմուայի ան-
սասյգ բարբառնջանքը վերէն ի վար ջրելու փոյթ
պիտի ընէին: Աս ալ բնական չէր արդեօք:

Արդ, թէ որ երկու կողման ըրածն ալ բնական
էր նէ, բնականաբար, զրոգ կողմանց երկուքն ալ
արիւնհեղութեան թատրէն հեռու գտուելուն, եր-
կու կողմէն ալ անկէ իրենց եկած հակառակ վկա-
յութիւններուն պիտի վստահէին, և մէկ կողմը
Հայոց անհաճոյ եղածը հաստատելու, միւս կողմն
ալ Մենմուայի հաճոյ եղածը ցրելու պիտի պա-
րապէր, մինչև որ ժամանակը գար, կամ մերին-
ներուն և կամ հակառակորդին հրատարակածներն
արդարացունէր: Ուրեմն երկու կողմէն ալ, մինչև
այն օրը լսածնիս զրեմք, թէ որ զրելու ախորժ-
ունիս նէ: Ինծի համար, լռել և քննութեանց վախ-
ճանին սպասել աւելի բնաւոր և շահաւոր կը
թուի, բայց դուն որովհետև ժամկոչ չեկած ելեր
Թաղերն ու Թեմերն իրար կանցունեսկոր, զրեմք:

Գերեմք, բայց Մենմուա սովորական հրապա-
րակագիր չէ. բնաւոր մըն է, որ ձեռքի գրիչը

Հայոց օրինադիր գաւազան, և ինքզինքն ալ Հայոց Նաբուգոդոնոսոր կարծելով, գրելու եկածին պէս, Հայոցմէ լսել և հաւատալ կը պահանջէ: Իմ ստացած լուրերս ստոյգ և աներկրայելի են, կըսէ, ականջնիդ կտրեցէք ինծի տուէք, և Մասիսն ու Մեղուն մատուներնուդ ծարովը մտիք ըբէք: Դժբաղդարար, Հայ ազգն ալ այն պարագային մէջ աչքով և ականջով իր օրագիրները մտիկ կընէ, և Մեհմուայի շաղիաղիութիւններն իր կօշիկներուն ծարովն անգամ մտիկ ընելու ոչ թրամադրութիւն ունի, ոչ կամք, ոչ հնազանդութիւն, և ոչ խենթութիւն: Ինչո՞ւ: Վասն զի,

Նախ, Մեհմուա Մուշի իրաց սկիզբէն մինչև վերջը խարդախութեան գործի ըլլալով, ասկէ ետև մինչև ի կատարած աշխարհի Եղրայէլի և ճէպրայէլի փողովն օրը քառսուն անգամ ճշմարտութիւն խօսելու ըլլայ նէ, Հայոցմէ առաջ Նահուաթիները պիտի պռւան թէ, Ատանկ ճշմարտութիւն, ան մասքմ վերմեմ, կեօրմեքիմ պիլմեն: Երկրորդ, ինք ազգին թշնամի, և հայթայթած լուրերն ալ ազգին իրեն պէս թշնամեաց համախոհութեամբը ձեռք բերուած ըլլալուն, շիտակ ալ ըլլային նէ Հայերը չէին կըրնար վստահութեամբ ընդունիլ: Երրորդ՝ իր բացատրութեանց մէջը յաղթասիրութեան և վրէժխնդրութեան կատաղի մոլեգնութիւնն ակնյայտնի տեսանելով, ճշմարտութեան հետք չէր մնացած: Ընդ հակառակն, ասդիյինները կասկածելի

չէին, վասն զի իրենք պարզապէս աղզին պատահած ճախորդութեանը վրայօք պարապելով, աղզին բարեկամաց, և ոչ թէ Մեմուայի թշնամեաց կողմէն եկած թուղթերուն վկայութեանը կը հետևէին:

Ասոնց մէկն ալ Մեմուայի բանին ձեռք չէր տար, և վերը ըսածնուս պէս՝ ժամանակին վերջին վկայութեանն սպասելու համար իր համբերութիւնն ալ իր խղճին պէս շատոնց հատած ըլլալով, Մեմուա չէր կրնար ժամանակին վախճանին սպասել: Ուստի, իր ոսոխներուն բերանը ժամանակէն առաջ կարկեցունելու և շուտով յաղթանակելու առձեռն պատրաստ միջոցներ փնտրելով, առաջ ըսաւ թէ, անոնց տուած լուրերն անանուն գրուած թուղթերու ստութիւններ են: Այս խօսքին աւելի ոյժ և ծանրութիւն տալու և Հայոց յեղակարծ սարսափ մը աղգելու համար՝ ետքն ալ ըսաւ թէ, Մասիսն ու Մեղուն միայն զինքը սուտ հանելու և պղտիկ ձգելու ռիսասիրութեամբ էր որ այս սուտ լուրերն ու սուտանուն նամակներն իրեն դէմ կընրատարակէին. իբրեւ թէ, Մասիսն ու Մեղուն ձայն չհանէին նէ, Հայերն այս թերթին բաջաղանքն աւետարանի պէս պիտի մտիկ ընէին: Այն թերթին, այն ամբարիշտ թերթին, որ երկու օր առաջ նոյն իսկ աւետարանն ալ մեղի սոփապարար կարդացեր, և պարսկօրէն մեկներ էր,

Արդեօք ինչ անձնամուլ ամբարտաւանութիւն պէտք էր տաանկ սրբապիղծ թերթի մը, որ պատ-

շաճից ակնածութիւնը մէկդի դնելով, Հայոց պատ-
ւոյն հակառակ անստոյգ լուրն ինք տալու սկսելէն
ետեւ, իր հրատակածները ստող լուրերուն համար
ալ Հայոց առջին կրկին անամօթութեամբ մեր օրա-
գրաց հետ մարտնչելուն ալ չամչնալով, էն վերջն
ալ ոչ միայն թեթևաբար կարծէր, այլ և հաստա-
տութեամբ ալ ինքզինքը հաւատացունէր, որ Հա-
յերն իրենց ալևոր վարդապետին խողխողումը,
իրենց սուգը և վանքին սասանութիւնը մոռնալով,
միայն այս ինքնապաշտ և խելացնոր թերթն իրենց
հոգ ու մտմտութ Ըրեր, և անխկնյ միայն սուտ հա-
նելու կղբադէին:

Բարէ. թէ որ Մեմուլայի խօշական կիրքն այս
ինքնախաբ երազներուն զուարճալի մարգացը մէջ
հարակելով բաւականանային նէ, զէթ մեր օգտին
համար ներելի էր իրեն այս ցնորական մեծամտու-
թիւնը. վասն զի, անմտաց զառանցանքն այլոց
խրատ ըլլալով, Մեմուլա ալ իր արբեցութեամբը՝
արբեալ Նդոսացւոյ ծառայութիւն մատուցած կըլ-
լար Հայոց մանկտւոյն: Բայց Մեմուլայի յաղթա-
սիրական կիրքն արեան ծարաւի էր, և այս անձնա-
կան պատճառանքն իր ոսոխներուն մահառիթ 'չըլ-
լալուն, Մեմուլա զինքն իր ցանկութեանը փութով
հասցունելու աւելի հզօր և անկասկած սատարու-
թիւն մը երևակայելով, իր անընդ մարգացը վրայէն
սրացաւ զնաց Յուդա Խկարիովտացւոյն զիրկը նե-
տուեցաւ, և անոր բազկացը մէջէն իր ոսոխնե-

րուն ձայն տալով, Տաճկաց ականջին քով և տաճ-
կերէն լեզուաւ սկսաւ ըսել :

— Մեմուային նենգութիւն ընելու և Մեմուան
« սուտ հանելու համար նայեցէք կոյր հակառակու-
« թիւը ձեզ ուր տեղաւանք տարաւ, Մասիս և
« Մեղու : Սկսաք անանուն համակներով պետու-
« թեան պաշտօնեայներուն ու ժողովներուն սև դը-
« պարտութիւններ ձգողներուն գործակից ըլլալ :
« Կառավարութեան կողմէն խրկուած պաշտօնէ
« ին անուամբը, Պայաղիտի տեղակալը, ժողովը
« և նայիպը ելուզակաց օգնական եղած ըլլալու
« համբաւ հանեցիք... ճիշդ ան ատենը, որ գերա-
« փառ պետութեանը վրայօք արեւելեան պետու-
« թիւն մըն ալ խկապէս ասանկ բերան մը բա-
« նեցուց ⁽¹⁾ :

Ըսել է որ, Ռումէլիյի մէջ արդարակորով Խըպ-
րըղը Մէհմէմէտ փաշան զրկանաց հարստահա-
րութեան և սպանութեան հետք և նշմարանք չխլիտի
գտնայ : Ըսել է որ խմաստասէր Ֆուատ փաշան
Տիւրքիւ տաղիյի վրայ և շրջակայները, մինչև Դա-
մասկոս և Նդեսիա և Բերիա, քանի մը շաբթուան
մէջ հարիւր քսան գեղ և քաղաք պարսլուած և մո-
խիր դարձած, հարիւրէն աւելի հռոմէական և
քսանէն աւելի յունական քահանայ փողոտած ու
շուներուն առջին ձգուած, կանայք և աղջկունք

(1) Մեմ. 548:

լկուելէն ետե խողխողած, տասը հազարէն աւելի
ծեր ու մանուկ երկու սեռէն սրոյ ճարակ գացած,
Դամասկոսի մէջ մէկ օրը հինգ հարիւր հոգի ջար-
դուած, եռսուն հազարէն ալ աւելի բնակիչ մահ-
ւան երեսէն փախատական, անապաւէն, ան-
պատապար, անուծի և անյոյս թափառած չիպիտի
գտնայ :

Ըսել է որ, դեռ երեկ չէ մէկայն օր Մուշի մէջ՝ կը-
դակնիդ ջախջախած չըլլայիք նէ, հեծանոսական
նոր աւետարանի մը դօրութեամբ կնիկներնիս մէ-
կիկ մէկիկ ձեռունուս չիպիտի յափշտակէիք :
Ըսել է վերջապէս, որ Մասիսն ու Մեղուն Ռուսաց
խնքնակալին վարձաւոր լրտեսներն են, և Հայոց
աղզն ալ, այն թերթերն իր նիւթական, իմացական,
և բարոյական կարեացը գէշ աղէկ, խորհրդարան
խօսարան լսարան և գործարան ընտրելովը, անոնց
հետ Ռուսաց պետութեանը կուսակից, և Օսմա-
նեան պետութեանն անհաւատարիմ է: Ասանկ է,
համբուրնդ դաւաճան : Թողունք ամբարշտին, որ
ալ ժայթքելիք ունի նէ սիրտը պաճալէ, և մենք
ալ ըսելիքնիս ըսենք ետքը :

Մասիսի ու Մեղուի նամակները սուտ ելլան նէ
« գաւառի մը տեղակալին, ժողովին ու պաշտօ-
« նէից վրայ առանց քննութեան ըրած սև դրպար-
« տութիւններնուն ու անուանարկութիւններնուն
« պատասխանատուութիւնը վրանին պիտի կրնան
« առնել: Կենանք նայինք, մենք առժամա լսօսքն

« Ընելէն ալ կը դողանք կոր: » Ինչո՞ւ կը դողայ արդեօք Յուդայի ձագուկը, թէ որ վրէժխնդրութեան տենդով յուղեալ երեսկայութեանը մէջ, իր ցանկութեանը համեմատ, Մասիսի գրիչը չուանն ելած, միւսն ալ ցիցը զարնուած տեսնալ չի կարծեր, և թէ որ իր բնական վատ երկչոտութեանը կամ իր յիսակալութեան կատաղութիւնը չէ, որ իր երեսկայութեանը յօրինած ցնորական երևոյթներուն վերայ զինքը կը դողացունեն: Թէ որ համակաց ստութեանը համար իր ոսոխները չը պիտի զլխատին, կամ գոնէ գելացներով և պրկոցներով չի պիտի տանջին ու չարչարին նէ, դողալու ինչ կայ:

Հայոց աղգը թշնամանելու համար ինք դուրսէն թուղթեր բերել տուեր է, որուն գրողները Մասիսի և Մեղուի գրիչներէն աւելի պատուաւոր չեն: Ասոնք ալ աղգին պատուոյն հալաատարար թուղթեր ընդուներ են, որոնց գրողները իր թղթոց գրողներուն չափի պատուաւոր են: Բայց համար ինք թէ գրուածները սուտ պիտի ելլան. սուտ չեն, սախալ են. որովհետեւ բերնէ բերան, ականջէ ականջ, ձեռքէ ձեռք անցնելով, սուրբ գիրք ալ ըլլայ նէ, մէջը գրչութեան կամ տպագրութեան սխալ կը մտնայ: Ասոր համար տպագրիչները որչափ կը կախուին նէ, Մասիսի և Մեղուի գրիչներն ալ այնչափ կը կախուին:..

Ալ ինչ կայ ուրեմն: Մասիսն ու Մեղուն կը կախուին: Թող որ Մեհմուայի գրիչը օր ըստ օրէ

զողացնելու համար աղգին մէջ « Թողի ինձ եօթն
հազար այր որ ոչ կրկնեցին ծունր Բահաղու, » Մա-
սիսի և Մեղուի գրիչներն անուծի կըմնան աղգին
մէջ, երբոր մէկն արդէն իր վաճառաշահութեամբը
կապրի, և միւսն ալ, հայկական երկու լեզուաց
քաջ հմտութեամբն ու ծարգմանական վարժու-
թեամբը, վարժապետաց կարօտ աղգային դպրո-
ցած մէջ՝ իր Մասիսէն հազարապատիկ աւելի և
ստոյգ օգուտ կրնայ ընել աղգին, և հետևաբար,
սուանց ըսելու ալ կըհասկցուի, որ ի վիշտ և ի
տրտմութիւն Մեմուլայի ան ալ անուծի չիմնար:

Ասկէ անդին ինչ մնաց դեռ Մեմուլայի ջիղերը
ցնցելու շարժառիթ: Արդեօք իր ոսոխները իր
ծուղթերուն պէս տակը վրան կայ կամ չիկայ
ծղթերու պատճառաւ բանտը կըդրուին: Անիծի՛ծ
արմատ, ասիկայ չնաշխարհիկ բաղդ մը կըլլայ,
որուն տիրանալու համար, եօթն պետութիւնները
սասանեցունող Մեմուլայի դէմ գրելու լուսաճա-
հանչ փառքս յօժարութեամբ կըփոխանակեմ, որ
անոնց տեղն էս բանտ երթամ: Աղգին այս եռաց-
մանն ատենն երկու գրիչ բանտ երթան: Թշուա-
ռականներն իսկոյն Հայոց Սիլվիո Փէլլիքոնները կըլ-
լան, և բանտին մէջ հայկական Բանսարգուքիւն
իմ գրելով, յաւիտեանս յաւիտենից կանամահանան:

Թէ որ իրենց բարի բաղդէն բանտին մէջ ալ
հողելու ըլլան նէ, ալ կըրնաս նէ առջևնին առ:
Ա՛ն օրիկը Հայկական քաղաքակրթութեան մար-

տիրոսները կըլլան, իրենց ոսկորներուն կտորուան-
քը եռսունական սկեղ կըծախուին, և ան իրիկու-
նը օրացոյցը նորէն կոխուելով, հազար երեսուն
և վեցը հազար երեսուն եւ ուր վկայից կըփոխուի:
Ողորմած Աստուած, ինչ սրտառուչ տեսարան
կըլլայ Հայոց համար, երբ կենդանութեան ա-
տեննին իրար ուտող երկու նախանձորդ, մեռնել-
նուն ետեւ Հայոց դրօշին վրայ իրար գրկած Դա-
մոններ ու Փինտիասներ նկարուած երևան:

Բայց բոլոր այս ապագայ թաղումներն ու յա-
րութիւնները մէկզիղնելով, հարցունենք Մեմֆուայի
Թէ, « ԶՅիսուս գիտեմ, և դՊօղոս ճոնաչեմ. բայց
դու ո՞վ ես: » Գիտենք որ Օսմանցին պետութիւն
մըն է, և Հայոց մէկ մասն ալ անոր ժողովուրդնե-
րէն մէկն է. երկուքին մէջ տեղը Մեմֆուան ինչ է:
Եւ նախ, անժամ Մեղուի հարցաբանութիւնն ի դէպ
ժամու կրկնելով, իմանանք որ, Մեմֆուան Տաճիկ
է Թէ Հայ. Հայոց բարեկամն է, Թէ Տաճկաց լրտե-
սը. աղգասիրութիւն է ըրածը, Թէ տիրասիրու-
թիւն: Տէրն իրեն հսկելու իշխանութիւն մը տուած
է Հայոց աղգին վրայ:

Հայոց օրագիրները համարինք Թէ տէրութեան
առջին պակասութեան մէջ գտնուած են. ասոր
գիտութիւնն ու քննութիւնը ներքին իրողութեանց
նախարարին և քաղաքին ոստիկանութեանը չիյ-
նար: Մեմֆուան ներքին իրողութեանց նախարարն
է, Թէ ոստիկանի անդամ: Ասոնց մէկն ալ չըլլա-

լով Հայոց համար ամբաստանութիւն կընէ նէ՝
Հայոց առջին Յուդայէն ինչ տարբերութիւն ունի,
և ինչ երեսով կըյանդգնի ազգը կըսիրեմ ըսել⁽¹⁾,
Թէպէտ և ազգն իր սէրն ալ զինքն ալ կարհամարհէ:
Թէ որ տիրասիրութեան նախանձով մատնութիւն
ընելու պարտաւոր կըհամարի ինքզինքընէ, տէրո-
ջը կողմէն ալ ընդունելիքը դարձեալ Յուդայի վարձ-
քն է, բայց արդեօք Մեհմուա նախարարներն՝ ոստի-
կանութիւնն ու բովանդակ պետութիւնն այնչափ կոյր
և խո՛ւլ կըհամարի, որ իրենց բիծին տակը Հայոց ըրա-
ծըն ու թողածը չըլսելով չտեսնալով, այս օտարաց-
եալ համազգւոյն մնացած ըլլայ Հայ օրագրաց դա-
ւաճանութիւնն իրենց յայտնել:

Օսմանեան պետութիւնը չիյտէ, որ հինգ հարիւր
տարիէն ի վեր իրեն բաղդակից ժողովրդոց զրե-
թէ ամէնն ալ, նա և իրեներն ալ անդադար և
մինչև ցայս օր իրեն վիշտ ու վէրք հասուցին, և
միայն Հայոց ազգն եղաւ, որ իր բնակակցաց երեսէն
կրածներուն Նբրայեցւոց պէս անմուռնչ համբե-
րելով, պետութեան համակրութիւնն ու վարկն իրեն
բաւական վարձ, և ցաւոցն սփոփանք համարե-
ցաւ: Ուրեմն Օսմանեան դուռն ասանկ անթշնամա-
նելի ժողովրդեան մը մեծին կամ պղտիկին վրայ իր
առջև դրժանաց ամբաստաւանութիւն ընող Մեհ-
մուային ինչ կըսէ: Նրեաւ չթքներ ըսեմ նէ, ար-

(1) Մեհմ. 151:

դարև իրեն մեծ պատիւ և թեթև պատիժ կըլլայ աս :

Իսկ Հայոց աղգին վրայօր զալով, անոր համար ասանկ խորհրդակորոյս և վատ թշնամիյի մը սպառնալէն աւելի դիւրին է, նոյն իսկ Օսմանեան պետութեան ոտքովն անոր բերանը պատռել : Հայոց աղգը վաղը սրբանուէր Պատրիարքին զաներիցութեամբը դրանը քահիւր մը ընէ, և թէ իր լրութեան ու թէ իր երկու անհատին հաւատարմութեանն ու պատուոյն Մեմուլայի ըրած թշնամանաց հատուցումն աղգովին պահանջելու ըլլայ նէ, ատեանին մէջ ինք միամինակ կըմնայ Հայոց պատասխանատու, և զինքն ամբողջ աղգի մը դէմ խիղախելու զրգուող ճիղվիթներն ալ զինքն իր ճակատագրին, կըլքանեն, ըսելով թէ, Պետրոս ալ վտանգի ատեն Յիսուսէն երես դարձուց, և մէնք ալ անոր աշակերտներն ըլլալով, անկէ պակաս չէինք կրնար ընել :

Ի՞նչ կըյուտայ ուրեմն Մասիսի ու Մեղուի ընել այս անկար թշնամին, որ թշնամի կոչուելու պատուոյն ալ չաժէր, ան. որ երբեմն աղգին մէջ ապաստանելով, անոր ուսումնականաց խնամօքը ասպնջականութիւն, կարեկցութիւն, հաց և ձրի սէր զտնալէն և երկար ատեն վայելելէն ետև, հիմա անոր ուսումնականաց արիւնին մէջ հաց թաթխելու կըպըտըտիկոր : Արկարծէ թէ Հայոց աղգն իր ուսումնականները, և յանուանէ Մասիսն ու Մեղուն ապաշնորհ մարդու մը կըրիցը

դոհէ : Մեղի կը թուի թէ, Հայերը Հայոց լեռներուն վրայ աւաղակութեամբ բռնուած, և արդարութեան ձեռամբը խանչն ելլալու դատապարտուած անարժան Հայ մըն ալ գտնուելու ըլլայ նէ, անոր անգամ կոշիկներն ալ Մեմուլայի հանոյիցը չեն դոհեր :

Հայերը Սահակ Պարթևի թոռներն են, որ աղ-գային պատանեկութիւնն անոր կենդանութեան ատենը շատ չարաչար գործածեցին, և աստուածարեալ ծերունւոյն սրտէն շատ հառաչանք, և աչու-ներէն շատ արցունք հանեցին, բայց հանրական կենաց արկածները, վիշտերը, տառապանքն ու փորձերը, դարուց ձեռօքն անոր երիտասարդու-թիւնը կրթելով և խրատելով, Հայերն ասօր իրար բռնելու և կամայ ակամայ իրար սիրելու կարիքը ճանչցեր, և վերջապէս Սահակայ սկզբանցն եկեր են : Ուստի հիմա որ խելահաս Հայուն հարցունէս նէ, Սահակայ պէս, կըսէ, « Քաւ լիցի ինձ, կըսէ, մատնել գայլոց դիմ մոլորեալ ոչխար ⁽¹⁾ : » Ամ, « Զխորդ լինիցի այդ, փոխանակել դիմ ախտա-ցեալ ոչխար ընդ առողջ գաղանի ⁽²⁾ :

Աղգին թշնամեանց վհատութեանն ու յուսահա-տութեանը համար բերկրութեամբ կըսենք, որ այս հայրենական և սրբազան սկզբունքն արդէն աղգին մէջ ծաւալած է, և քանի որ դատախարակութիւնը տարածի, ան ալ այնչափ պիտի ծաւալի. և շատ

(1) Խորն, Գ, ԿԳ :

(2) Մեղ.

չընէր, դեռ երեկ չէ մէկալն օր, Աստաւանդնուպօլսոյ մէջ, աղգին անձնանուէր խելահասներուն ամէնն ալ, անխտիր ամէն պայմանէ, զլուխ զլիսու տալով, այս միաբանական առաքինութեան պանծալի հանդէսն ըրին, և աղնուական ու աղղու օրինակ մըն ալ աւելի տուին հասարակաց:

Իսկ ուրացող և մատնիչ Մեհմուայի վատութեանը վրայ խօսքերնիս վերջացունելով, բնօրէն, անոր արդեանցը մէջ նախանձելի և մանաւանդ դարմանալի բան չիկայ: Հայոց համար Վարդանէր, որ մէկ հատիկ եկաւ, մէկ հատիկ գնաց, և մէկ հատիկ մնաց. Վասակ սատկած ատենն անիծեալ հողոյն մէջ մարմին մը ձգեց, որուն ճիտէն Հիդրայի պէս դարուցի դարս զլուխներ բուսնելով, մարմիններնին ու անուններնին միայն կը փոխեն, և հողինին նոյն Վասակն է անփոփոխ: Աղօթենք, որ Մեհմուա վերջինն եղած ըլլայ:

Խ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ.

Փարիզ 2 օգոստոսի 1860.



ԳԻՆ

մեկուկես փոսնի

0023082

2013 5706

